Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека



«ՀՐԱԺԱՐՈՒՄ»



## Տ. ՇԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Վարդան)

Ծնվել է 1979 թ. Էջմիածին քաղաքում:

1986-1995 թթ. սովորել է Էջմիածնի Ռաֆայել Պատկանյանի անվան № 9 միջնակարգ դպրոցում:

1995-2001 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախասարկավագի տոնին, ձեռամբ Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հուլիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ «Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի դեգերումները 1915-1930 թթ.» թեմայով՝ ստանալով «լավ» գնահատական:

2001 թ. հուլիսից ծառայության է անցել նախ Վեհարանում՝ որպես գործավար քարտուղար, ապա Գևորգյան Հոգևոր Ճեմարանում՝ իբրև վերակացու: Այժմ աշխատում է Մայր Աթոռի ֆինանսական համակարգում:

2004 թ. փետրվարի 15-ին՝ Սրբոց Վարդանանց նահատակության տոնին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի, ձեռնադրվել է քահանա: